ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «1700-ԱՄՅԱԿԸ ՈՐՊԵՍ ԴԱՐՁԱԿԵՏ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ»

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 29 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, սփյուռքից Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած թեմական առաջնորդների և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ, այցելեց Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ 1700-ամյակի փոնակատարություններից առաջ միասնական աղոթքի կանգնելու նշանակալի հոբելյանի առիթով կառուցվող Մայր եկեղեցում: Վեհափառ Հայրապետի ուղեկիցների թվում էին նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Մեսրուռ եպս. Մարգսյանն ու Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից՝ Տ. Սեան եպս. Ղարիբյանը: Ներկա էին 1700-ամյակի պետական հանձնաժողովի փոխնախագահ Խոսրով Հարությունյանը և ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Ռազմիկ Մարկոսյանը:

«Աղոթքս եմ սա Աստված բարձրացնում՝ հայցելով Տիրոջ զորակցությունը մեզ ամենքիս, որպեսզի կարողանանք փառքով և արժանի վայելչությամբ փոնափմբել 1700-ամյակը որպես մի դարձակետ, որը պիտի գա բարեփոխելու, նորոգելու և վերազարթոնքն ապահովելու ազգային և հոգևոր մեր կյանքի»,- միասնական աղոթքից հետո ասաց Նորին Սրբությունը:

Գալիք հոբելյանական փառում հավատացյալների առջև իր դռները կբացի նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին:

Նորին Սրբությունը հոգու պարտք համարեց իր ողջ վեհությամբ ավարտին հասցնել երջանկահիշատակ իր նախորդների՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետների նվիրական երազը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը:

Այսօր շարունակվում են եկեղեցու հարդարման աշխատանքները: Բացի փանիքից, ավարտված է արտաքին երեսապատումը, շարունակվում են ներքին երեսապատման աշխատանքները:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը նախատեսված է 2001 թ. սեպտեմբերի 23-ին: